այլ ամենայն վաճառականք և արհեստաւորք ապքատացան, զի ոչ կարացին փախուցանել ինչ։

Ասեն թէ ի հնդստան եղեալ է մեծ երկրաշարժութիւն, և ծովն բարձրացեալ և արկեալ է զնաւսն ի ցամաք. և կոխեալ է զգեղս ինչ. ընդ ամէնն իբր 1000 և աւելի անձինք մեռեալ են. դեռ որոշակի զատոյգն չիմացայ։...

1766 դեկտ. 18 Ն. Ի. Հ. Յակոբոս վրդ. Զամչեանց. Մխիթարեան
ի ըստամպոլ

## ՄԿԷ.

*Հրդեհ մը ևս ի Պոլիս։*

*Գերապատիւ և գերարգոյ Տեառն Տեառն Ստեփաննոս վարդապետի Արբայ հօր վերոյ ողջոյն աչանամբոյր*

... Երկու պէյլիկ նաւք ելին յառաջոյ թէրսխանային, և կացին ի բացի գնալ ի խըշլայ փոխանակ տօնանմային որ դարձեալ եկեալ էր ի քաղաքս ըստ սովորութեան. և ի գիշերին դիպուածով իմն անկաւ հուր ի միում ի նաւացն, և այրեալ պարան խարսխին սկսաւ նաւն գնալ աստ և անդ, և յերկոսին ափունս ծովուն նաւք բազումք բորբոքեցան աւելի քան զտասնևութ. բայց ի խնամոցն աստուծոյ, ոչ էր հողմ սաստիկ յայնմ գիշերի, և ոչ գոյր ճէպխանայ ի նաւսն, և միայն վեց այլ նաւք բաց ի նոյն պէյլիկէն այրեցան գլխովին, իսկ այլք ըստ մասին ինչ. արկին հուր նաւքն նաև ի տունս տունս որք մօտ էին ի ծով, և այրեցան իբրև երեսուն և քառասուն բնակարանք, այլ ոչ յառաջեաց հրայրեացն որչափ կարծեցեալ լինէր, զի եթէ չէր օգնեալ տեառն, մարթ էր կոստանդնուպօլսի և խալաթիոյ այրել միանգամայն։ Այրեցաւ և քէօշք թագաւորին որ ի յայնալը խաւաթ։ Յերկրորդում աւուր բազում ֆէրմանս արարեալ խնդրեաց թագաւորն զնաւապետն պէյլիկին այրեցելոյ պատուհասել զնա. բայց ոչ գտաւ, զի առժամայն մինչդեռ տակաւին բորբոքեալ վառէր նաւն չոքաւ թագեաւ այրն։ Այլ յերրորդումն աւուր ծնաւ թագաւորին արու մանուկ մէհմէտ անուն, և ի պատիւ երեսաց նորա շնորհեաց ասեն թագաւորն զյանցանս նաւապետին։ Եւ որպէս թուի, թագաւորն ոչ կամի առնել ուրեմն տօնանմայ, սակայն մեծամեծ ի պալատս իւրեանց առնեն զհանդէս խրախութեան որդւոյ թագաւորին։ Ասեն թէ ճէզայիրն բացեալ է պատերազմ ընդ վենետիկեանց, և աստի էլչին վենետկոյ արգել զնաւսն վենետկոյ որ աստ էին զի մի՛ գնասցեն, մինչև անտի հրաման ինչ լինիցի։...

Յամի տեառն 1767 Դուստ ծառայ
Յունվարի 14 Հ. Անանիա վրդպ. Մ[խիթարեան]
[Կ. Պոլիս]

## ՄԿԸ.

*Ասիկա է ականաւոր հայ ծանօթ անձնաւորութեան մը խոր յարգանքն ու համարումը դէպի Մխիթարեան Ուխտը։*